

ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N_ P13-001

Երևան

04-ը դեկտեմբերի 2013թ.

Էվի ունիվերսալ ՍՊԸ այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս տնօրեն Ն. Տոնոյանի ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ??????????????????????, այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս տնօրեն ?????????????????????? ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

Պայմանագրում օգտագործվող տերմինները և դրանց նշանակությունները

ամիս – օրացուցային ամիս

հաշվարկային ամիս - գույքն օգտագործման համար նախատեսված ամիս

հաշիվ- հաշվարկային փաստաթուղթ, որում կատարվում են սույն պայմանագրից բխող փողային հաշվարկները:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2. կետում նշված գույքը:

1.2. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնման ընդունման ակտով հանձնել հետևյալ գույքը՝ Հսկիչ Դրամարկղային Մեքենա ___ MF-2351 ___ մոդելի, ___ ?? _ հատ, այսուհետ՝ «Գույք»:

1.3. Գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է Վարձատուի մոտ առկա ձեռքբերման փաստաթղթերով:

1.4. Գույքը Վարձակալին պետք է հանձնվի սույն պայմանագրին կից հանձնման և ընդունման ակտով՝ պայմանագիրը ստորագրելու պահից ___ ?? ___ օրվա ընթացքում:

1.5. Գույքը նախատեսվում է որպես Վարձակալի կողմից հանձնման ընդունման ակտում նշված հասցեում իրականացվող տնտեսական գործունեության ընթացքում օգտագործելու համար:

1.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.7. Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1. կետում նշված Գույքը վաճառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.8. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. Վարձակալից պահանջել Գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու տվյալ ամսվա վարձավճարը.

2.1.3. պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

2.1.4 ոչ ավել քան շաբաթական մեկ անգամ այցելել Վարձակալին և ստուգել Գույքի առկայությունը և նպատակային օգտագործումը՝ առանց խաթարելու վերջինիս բնականոն աշխատանքները:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2. Գույքը Վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն).

2.2.3. Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.

2.2.4. Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Գույքի թերությունները կամ իջեցնել վարձավճարը:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 1.4. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը.

2.3.2. Վարձատուից պահանջել իրեն տրամադրելու Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3.2. Վարձատուին նախապես գրավոր տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.

2.3.3.3. պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը.

2.3.4. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Գույքի վիճակը վատթարացել է.

2.3.5. Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.3. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.5.1. կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին.

2.3.5.2. պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.

2.3.5.3. պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.3.6. Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.4. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում, պահանջել նվազեցնելու վարձավճարը:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. ժամանակին նուծել Գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարը (վարձավճարը).

2.4.2 Գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

2.4.3. սույն պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը.

2.4.4. կնքել պայմանագիր, Գույքը սպասարկող ընկերության հետ.

2.4.5 Գույքը շահագործել վարձատուի կողմից տրամադրված պատյաններում:

3. Հաշվարկները

3.1. Վարձավճարի չափը մեկ ամսվա համար կազմում է 23,000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ:

3.2 Եթե Վարձակալը Գույքի վարձակալությունը սկսվում կամ ավարտվում է ոչ լրիվ ամսվա հաշվարկով ապա հաշվարկները կատարվում են հետևյալ կերպ 767 (յոթ հարյուր վաթսուներոթ) ՀՀ դրամը հաշվարկային ամսվա ընթացքում փաստացի վարձակալած օրերի թվի վրա բազմապատկելով:

3.3. Վարձակալը վարձավճարը վճարում է կանխավճարային կարգով՝ ամեն ամիս, հաշվարկային ամսին նախորդող ամսվա 20-ից ոչ ուշ՝ սույն պայմանագրում նշված Վարձատուի հաշվին գումարը փոխանցելու միջոցով: Վարձավճարի վճարման օր է

համարվում Վարձատուի հաշվարկային հաշվին գումարի մուտքագրման օրվանից հանած մեկ բանկային օր:

3.4 Վարձատուն վարձակալին, հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա մինչև 5-ը, ներկայացնում է հաշիվ նախորդ ամսվա հաշվարկներով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վճարներն ուշացնելու համար Վարձակալը Վարձատուին՝ վերջինիս գրավոր պահանջը ստանալուց հետո, վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր ուշացման դեպքի համար 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամի չափով, և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով:

4.2. Տուժանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

4.3. Եթե Վարձակալը սույն պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, կամ անսարք վիճակում ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.4. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

4.5. Եթե Վարձակալը սույն պայմանագիրը դադարեցրել է ընդունման հանձնման ակտում սահմանված ժամկետից շուտ, ապա Վարձակալը Վարձատուին՝ վերջինիս գրավոր պահանջով, վճարում է տուգանք՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

4.7. Եթե Վարձակալը գույքը չի վերադարձրել ընդունման հանձնման ակտում սահմանված ժամկետից մեկ օրացույցային օր հետո կամ այն վերադարձրել է անսարք վիճակում ապա Վարձակալը Վարձատուին վճարում է տուգանք՝ 369,600 (երեք հարյուր վաթսուները հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Գույքի վարձակալության ժամկետը սկսվում է **04 դեկտեմբեր 2013** ից և ավարտվում է **03 դեկտեմբեր 2014**-ին:

5.2 Կողմերը 5.1 կետում սահմանված ժամկետը երկարացնելու համար կնքում են նոր պայմանագիր կամ համաձայնագիր նշելով պայմանագրի գործողության նոր ժամկետներ:

6. Վարձակալած Գույքի բարելավումները

6.1. Վարձակալած Գույքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

6.2. Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

6.3. Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6.4. Վարձակալած Գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

7.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

7.1.1 Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

7.1.2. էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

7.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել կամ ուշացրել է վարձավճարը.

7.1.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Գույքի ընթացիկ վերանորոգումը:

7.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

7.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

7.2.2. Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես

հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, Գույքը զննելիս կամ դրա սարքինությունն ստուգելիս:

7.2.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

7.3. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ցանկացած այլ ժամկետում:

8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

10.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու Էվի ունիվերսալ ՍՊԸ		Վարձակալ ?? ?? ?? ?? ?? ?? ??	
Հասցե	ք. Երևան Ավան Առինջ, 2-րդ միկրո, շենք1/7, բն 18	Հասցե	
ՀՎՀՀ	00881095	ՀՎՀՀ	
Բանկի անվանումը	Ամերիա Բանկ ՓԲԸ	Բանկի անվանումը	
Հաշվի համարը	15700-15207310100	Հաշվի համարը	
տնօրեն	Նարինե Տոնոյան	տնօրեն	
Կոնտակտային հեռ.	077 830430	Կոնտակտային հեռ.	
Էլ. Փոստ	info@evi.am	Էլ. Փոստ	
ստորագրություն	_____	ստորագրություն	_____
կ.տ		կ.տ	

Հանձնման Ընդունման

ԱԿՏ N_ Բ13-001-1

Ամսաթիվ « 04 » դեկտեմբերի 2013թ.

Սույն ակտի ստորագրմամբ կողմերը հավաստում են, որ Վարձատուն հանձնեց և Վարձակալը ընդունեց ստորև բերված աղյուսակում Գույքը, նշված վիճակով:

N	Մոդել	Գործարանային համար	Արտաքին տեսքը	ծրագրային ապահովումը	տեղադրման Հասցե	Վարձակալման նվազագույն ժամկետ
1	MF 2351		Գերազանց	Գերազանց		03.06.2014թ.
2	MF 2351		Գերազանց	Գերազանց		03.12.2014թ.
3						
4						
5						
6						
7						
8						
9						
10						

Հանձնեց Էվի ունիվերսալ ՍՊԸ		Ընդունեց ?? ?? ?? ?? ?? ?? ?? ??	
Ա.Ա.Հ	Նարինե Տոնոյան	Ա.Ա.Հ	?? ?? ?? ?? ?? ?? ??
ստորագրություն	_____	ստորագրություն	_____
կ.տ		կ.տ	